ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"21" Նոյեմբեր 2025թ. N 505-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 10 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 1596-Ա ՀՐԱՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի մարտի 12-ի թիվ 10 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի :

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հուլիսի 12-ի «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի արդյունքները հաստատելու մասին» N 1596-Ա հրամանի 2-րդ կետը:

3. «Գ-Արքունիք-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը զրկել Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման իրավունքից:

4. Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետին՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում ծանուցել «Գ-Արքունիք-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

3/21/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2025թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

12 մարտի 2025թ. ք. Երևան

2025 թվականի մարտի 12-ին ժամը 15:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը
Գ. Խաչատրյանը

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Հ. Գուլաբյանը և Ա. Սմբատյանը:

<u>Օրակարգում</u>՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024թ. հուլիսի 8-ի մրցույթում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024

թվականի հուլիսի 12-ի N 1596-Ա հրամանի համաձայն հաղթող ճանաչված «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 2024 թվականի հուլիսի 22-ի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության միջև կնքված «հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները ներկայացնելու ժամանակացույցի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Ժամանակացույց) և 2025 թվականի հունվարի 10-ին Ժամանակացույցում փոփոխությունների մասին համաձայնագրի համաձայն ավտոտրանսպորտային միջոցների ներկայացման հարցը:

2. Ընկերության կողմից 2025 թվականի մարտի 3-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված գրությունը:

<u>Քննարկվեց</u>՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024թ. հուլիսի 8-ի մրցույթում հաղթող ճանաչված «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերության կողմից 2024 թվականի հուլիսի 22-ի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության միջև կնքված Ժամանակացույցով և Ժամանակացույցի անբաժանելի մաս կազմող Ժամանակացույցում փոփոխությունների մասին 2025 թվականի հունվարի 10-ին կնքված համաձայնագրով սահմանված ժամկետում, այն է՝ մինչև 2025 թվականի մարտի 12-ը, ավտոտրանսպորտային միջոցների ներկայացման հարցը:

2. Ընկերության կողմից 2025 թվականի մարտի 3-ին ներկայացված գրության, այն է՝ անհաղթահարելի ուժի առկայության հանգամանքը:

<u>Արձանագրվեց</u>՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024թ. հուլիսի 8-ի մրցույթում հաղթող ճանաչված «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերությունը 2024 թվականի հուլիսի 22-ի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության միջև կնքված Ժամանակացույցով հաստատված ժամկետում՝ 2025 թվականի հունվարի 12-ին չի ներկայացրել Ժամանակացույցով սահմանված 69 (վաթսունինը) ավտոտրանսպորտային միջոցները:

2. 2025 թվականի հունվարի 10-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության միջև կնքվել է Ժամանակացույցի անբաժանելի մաս կազմող Ժամանակացույցում փոփոխությունների մասին համաձայնագիր, որի համաձայն Կազմակերպության կողմից Ժամանակացույցի 2.2-րդ և 7-րդ կետերով նախատեսված սահմանված քանակով տրանսպորտային միջոցների ներկայացման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի մարտի 12-ը:

3. Ընկերությունը կրկին Ժամանակացույցում փոփոխությունների մասին համաձայնագրով սահմանված ժամկետում չի ներկայացրել 69 (վաթսունինը) ավտոտրանսպորտային միջոցները:

4. Ընկերությունը չի ներկայացրել հիմնավորումներ և փաստաթղթեր պարտավորությունների կատարման անհնարինության և անհաղթահարելի ուժի առկայության վերաբերյալ:

<u>Որոշվեց</u>՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ա կետով և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի իրավակարգավորումներով՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024թ. հուլիսի 8-ի մրցույթում հաղթած «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերությանը զրկել սպասարկման իրավունքից:

2. Սույն արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան

Գ. Խաչատրյան